ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-3-1-Ա

ք. Երևան 11.09.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի սեպտեմբերի 10-ի նիստում քննարկեց 2013 թվականի հուլիսի 15-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ ESCO corporation ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «ESCO» (IR1081019) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 87-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված "ESCO" ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող "ESCO" Esfahan Steel Company (ESCO) Saadi Boulevard No 178,8175614461 Esfahan (IR1050534) ապրանքային նշանին: Ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված: Հայտարկված նշանի առաջնային ընկալման տարրը "ESCO" բառն է, որն իր մեջ ներառում է "ESCO" հակադրված ապրանքային նշանը, և որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտը:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու, քանի որ մերժված և հակադրված ապրանքային նշանները իսկապես շփոթելու աստիճան նման են:

Բողոքարկողը, ինչպես բողոքում այնպես էլ նիստի ժամանակ նշեց իր անհամաձայնութունը որոշման վերաբերյալ ներկայացնելով մերժված և հակադրված ապրանքային նշանների գրաֆիկական, հնչյունաբանական և տեսողական տարբերությունները, նաև երկու ընկերությունների բավականաչափ հայտնի լինելը, ինչը նվազեցնում է այդ նշաններն իրար հետ շփոթելու հավանականությունը սպառողի համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ ESCO corporation ընկերության «ESCO» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան